

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ՀՀ-ԱՄ-ՆԱԽ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/01 >>**

ք. Աշտարակ

<<30>> Մարտի 2017 թ.

<<ՀՀ Արագածոտնի մարզպետարանը>> , ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ.Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԿՈՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Եզանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծահետազոտական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Գննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծման և փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումով, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին և ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին և ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառարանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 7001000(յոթ միլիոն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵՒԻ ՈՒԺԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա ևղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չեն կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի

ղաղարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:



7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Արագածոտնի մարզպետարան
«Արագածոտնի մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
Բանկ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900441000990

Աշխատակազմի ղեկավար՝



/ստորագրություն


Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԿՈՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ
Ք.Վանաձոր Աղայան 94/31
Բանկը՝ ՎՏԲ-Հայաստան բանկ
Վանաձոր մասնաճյուղ
Հ/Հ 16036028818900
ՀՎՀՀ 06929779

«ԷԿՈՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի տնօրեն


/ստորագրություն

Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

3,16,21,22,36,37 չափաբաժիններ

Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու թիվ 12 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ , Ապարան քաղաքի Նժդեհ փողոցի թիվ 10 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Ծաղկահովիտ համայնքի Բժշկյան փ. թիվ 7 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Ծաղկահովիտ համայնքի Բժշկյան փ. թիվ 8 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Թալին քաղաքի Խանջյան 25 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Թալին քաղաքի Գայի փ. թիվ 21 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ ծրագրերի նախագծահետազոտական աշխատանքներ

Հ/Հ	Օբյեկտների անվանումները և արժեքները ՀՀ դրամ	Ձևորելովոդ Աշխատանքի նկարագիր
1.	<p>Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու թիվ 12 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-288000 (երկու հարյուր ութսունութ հազար) , Ապարան քաղաքի Նժդեհ փողոցի թիվ 10 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-300000 (երեք հարյուր հազար), Ծաղկահովիտ համայնքի Բժշկյան փ. թիվ 7 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-300000 (երեք հարյուր հազար), Ծաղկահովիտ համայնքի Բժշկյան փ. թիվ 8 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-455000 (չորս հարյուր հիսունհինգ հազար), Թալին քաղաքի Խանջյան 25 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-280000 (երկու հարյուր ութսուն հազար), Թալին քաղաքի Գայի</p>	<p>Շենքերի տանիքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքների շրջանակներում նախատեսվում է իրականացնել տանիքի ազդրոցմենտյա թերթերի ծածկի քանդում: Տանիքի ծածկի թերթերի, թեքներ և կանգնակների շարքից դուրս եկած հատվածների փոխարինում: Տանիքի ծածկի իրականացում ձևավոր ցինկապատ թիթեղից փայտե կավարամածի խտացումով</p>

	<p>փ. թիվ 21 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ ծրագրերի նախագծահետազոտական աշխատանքներ-199000 (մեկ հարյուր ինսուսինը հազար)</p>	
2.	<p>Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ</p>	<p align="center"><u>Հիմնավորում</u></p> <p>ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2016 թվականի № 1313-Ն որոշում ՀՀ կառավարության 16 փետրվարի 2016 թվականի № 153-Ն որոշում</p> <p align="center"><u>Նորմատիվային պահանջներ</u></p> <p>ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգ:</p>
3.	<p>Նախագծման փուլերը</p>	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 № 273-Ն հրամանի համաձայն: 1. Աշխատանքային նախագիծ</p>
4.	<p>Նախագծի կազմը</p>	<p>Աշխատանքային նախագծի կազմում՝ ա) ելակետային տվյալներ՝ Նախագծի թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), սույն բնութագրով ամրագրված այլ պահանջներ բ) չափագրություններ գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ ե) ճարտարապետական մաս, կոնստրուկտորական մաս, ներքին ինժինեռական ցանցային մաս է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ը) ծավալաթերթ և այլն:</p>
5.	<p>Այլ պահանջներ</p>	<p>Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ, Նախագծանախահաշիվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում նախագծանախահաշիվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության ձեռքբերում: Շինանյութերի և կոնստրուկցիաների զնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն: Նախագծում և ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Նախագծանախահաշիվային փաստաթղթերի մշակում էլեկտրոնային տարբերակով: Տեղական կամ համարժեք արտադրության շինանյութերի օգտագործում: Նախագծանախահաշիվային փաստաթղթերի</p>

		/տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/անբողջական փաթեթի ներկայացում 4 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով:
Աշխատանքի կատարման ժամկետը		
	Սկիզբը	Ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 15-րդ օրացուցային օրը ներառյալ:

4, 6,9, 17, -րդ չափաբաժիններ

Արուճի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Օշականի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Փարպիի խաչմերուկից Ղազարավան խաչմերուկի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Ափնազյուղի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ

Հ/Հ	Օբյեկտի անվանումը և արժեքները ՀՀ դրամ	Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր
1.	Արուճի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-577000 (Հինգ հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ Օշականի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-244000 (երկու հարյուր քառասունչորս հազար), Փարպիի խաչմերուկից Ղազարավան խաչմերուկի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ -990000 (ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, Ափնազյուղի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-333000 (երեք հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ, ծրագրերի նախագծահետազոտական աշխատանքներ	Նախատեսել փողոցների փոսային նորոգում մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթով /նվազագույնը 50 մմ հաստությամբ/, մասամբ խճային հիմքի իրականացում, վնասված եզրաքարերի փոխում, խարխլված եզրաքարերի վերաշարում: Համատարած ասֆալտապատվող փողոցներում հիմնատակի կառուցում՝ անհրաժեշտության դեպքում երկշերտ ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում:
2.	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	<u>Հիմնավորում</u> ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2016 թվականի N° 1313-Ն որոշում ՀՀ կառավարության 16 փետրվարի 2016 թվականի N° 153-Ն

		<p>որոշում</p> <p><u>Նորմատիվային պահանջներ</u></p> <p>ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»</p> <p>ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգ:</p>
3.	Նախագծման փուլերը	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 № 273-Ն հրամանի համաձայն:</p> <p>1. Աշխատանքային նախագիծ</p>
4.	Նախագծի կազմը	<p>Աշխատանքային նախագծի կազմում՝</p> <p>ա) ելակետային տվյալներ՝</p> <p>Նախագծի թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), սույն բնութագրով ամրագրված այլ պահանջներ</p> <p>բ) չափազրություններ</p> <p>գ) ընդհանուր բացատրագիր</p> <p>դ) շինարարության կազմակերպման նախագիծ</p> <p>ե) ճարտարապետական մաս, կոնստրուկտորական մաս, ներքին ինժինեռական ցանցային մաս</p> <p>է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ,</p> <p>ը) ծավալաթերթ և այլն:</p>
5.	Այլ պահանջներ	<p>Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ,</p> <p>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության ձեռքբերում:</p> <p>Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնազոյսցման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն:</p> <p>Նախագծում և ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում:</p> <p>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում էլեկտրոնային տարբերակով:</p> <p>Տեղական կամ համարժեք արտադրության շինանյութերի օգտագործում:</p> <p>Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 4 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով:</p>
Աշխատանքի կատարման ժամկետը		
	Սկիզբը	Ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 15-րդ օրացուցային օրը ներառյալ:

8,10, 23, 25,27,-րդ չափաբաժին

Ուիջանի մշակույթի տան վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Արտաշավանի մանկապարտեզի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Բերքառատի մշակույթի տան վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Մելիքյուղի հանդիսությունների սրահի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, Ծիլքարի համայնքային կենտրոնի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ

Ը/Ը	Օբյեկտի անվանումը արժեքները ՀՀ դրամ	Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր
1.	<p>Ուիջանի մշակույթի տան վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-660000 (վեց հարյուր վաթսուց հազար) ՀՀ դրամ, Արտաշավանի մանկապարտեզի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-555000 (հինգ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, Բերքառատի մշակույթի տան վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ -590000 (հինգ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, Մելիքյուղի հանդիսությունների սրահի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-555000 (հինգ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, Ծիլքարի համայնքային կենտրոնի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-385000 (երեք հարյուր ութսունհինգ հազար)</p>	<p>Նախատեսել աշխատասենյակների և դահլիճի փայտե դռների և պատուհանների փոխում, հատակների վերակառուցում, ներքին հարդարման աշխատանքների իրականացում, տանիքի ծածկույթի վնասված հատվածների փոխում, պատուհանների տեղադրման և պատուհանների շեպերի սվաղի իրականացման աշխատանքներ:</p>
2.	<p>Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ</p>	<p><u>Հիմնավորում</u></p> <p>ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2016 թվականի № 1313-Ն որոշում ՀՀ կառավարության 16 փետրվարի 2016 թվականի № 153-Ն որոշում</p> <p><u>Նորմատիվային պահանջներ</u></p> <p>ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման</p>

		<p>նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»</p> <p>ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգ:</p>
3.	Նախագծման փուլերը	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 № 273-Ն հրամանի համաձայն:</p> <p>1. <u>Աշխատանքային նախագիծ</u></p>
4.	Նախագծի կազմը	<p>Աշխատանքային նախագծի կազմում՝</p> <p>ա) ելակետային տվյալներ՝</p> <p>Նախագծի թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), սույն բնութագրով ամրագրված այլ պահանջներ</p> <p>բ) չափագրություններ</p> <p>գ) ընդհանուր բացատրագիր</p> <p>դ) շինարարության կազմակերպման նախագիծ</p> <p>ե) ճարտարապետական մաս, կոնստրուկտորական մաս, ներքին ինժինեռական ցանցային մաս</p> <p>ե) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ,</p> <p>ը) ծավալաթերթ և այլն:</p>
5.	Այլ պահանջներ	<p>Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ, Նախագծանախահաշիվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում նախագծանախահաշիվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության ձևաքերում:</p> <p>Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն:</p> <p>Նախագծում և ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում:</p> <p>Նախագծանախահաշիվային փաստաթղթերի մշակում էլեկտրոնային տարբերակով:</p> <p>Տեղական կամ համարժեք արտադրության շինանյութերի օգտագործում:</p> <p>Նախագծանախահաշիվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշիվ/ ամբողջական փաթեթի ներկայացում 4 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով:</p>
Աշխատանքի կատարման ժամկետ		
	Սկիզբը	Ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 15-րդ օրացուցային օրը ներառյալ:

28-րդ չափարածին

Լեռնապարի դպրոցի արտաքին ջրամատակարարման կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Ձևաքերվող Աշխատանքի նկարագիր
-----	-------------------	------------------------------

1.	<p>Լեռնապարի դպրոցի արտաքին ջրամատակարարման կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ-290000 /երկու հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ</p>	<p>Նախատեսել խորքային հորի հորատում խողովակաշարի տեղադրում, պոմպի մոնտաժում, էլեկտրամատակարարման սպահովում և տարածքի ցանկապատում: Ջրամատակարարման ցանցերի համար նախատեսել հողային աշխատանքների խողովակաշարի մոնտաժման և պաշտպանիչ շերտերի իրականացման, դիտահորերի տեղադրման, բաշխիչ հանգույցների մոնտաժման, ասֆալտածածկույթի վերականգնման և անհրաժեշտ այլ աշխատանքներ:</p>
2.	<p>Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ</p>	<p align="center"><u>Հիմնավորում</u></p> <p>ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2016 թվականի № 1313-Ն որոշում ՀՀ կառավարության 16 փետրվարի 2016 թվականի № 153-Ն որոշում</p> <p align="center"><u>Նորմատիվային պահանջներ</u></p> <p>ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգ:</p>
3.	<p>Նախագծման փուլերը</p>	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 № 273-Ն հրամանի համաձայն: 1. <u>Աշխատանքային նախագիծ</u></p>
4.	<p>Նախագծի կազմը</p>	<p>Աշխատանքային նախագծի կազմում՝ ա) ելակետային տվյալներ՝ Նախագծի թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), սույն բնութագրով ամրագրված այլ պահանջներ բ) չափագրություններ գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ ե) ճարտարապետական մաս, կոնստրուկտորական մաս, ներքին ինժինեռական ցանցային մաս է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ը) ծավալաթերթ և այլն:</p>
5.	<p>Այլ պահանջներ</p>	<p>Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ, Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության ձեռքբերում: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն: Նախագծում և ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում էլեկտրոնային տարբերակով: Տեղական կամ համարժեք արտադրության շինանյութերի օգտագործում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի</p>

		ներկայացում 4 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով:
Աշխատանքի կատարման ժամկետը		
	Սկիզբը	Ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 15-րդ օրացուցային օրը ներառյալ:


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ


ՀՀ Արագածոտնի մարզպետարան
 ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ
 Վ.Պետրոսյան 4
 ՀՎՀՀ՝ 05004247
 Բանկ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության
 գործառնական վարչություն
 Հ/Ը 900441000990
 Աշխատակազմի ղեկավար՝

«ԷԿՈՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ
 Բ.Վանաձոր Աղայան 94/31
 Բանկը՝ ՎՏԲ-Հայաստան բանկ
 Վանաձոր մասնաճյուղ
 Հ/Ը 16036028818900
 ՀՎՀՀ 06929779

4.Տ



Հանրային վարչության
 ղեկավար

«ԷԿՈՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի տնօրեն

 Ա.Եգանյան
 /ստորագրություն
 4.Տ

37	Թալին քաղաքի Գայի փ. թիվ 21 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտ ական աշխատանքներ				199000	199000	199000	199000	199000	199000	199000	199000	199000	199000
	Ընդամենը				7001000	7001000	7001000	7001000	7001000	7001000	7001000	7001000	7001000	7001000


* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ


«Արագածոտնի մարզպետարան
«Արագածոտնի մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
Բանկ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900441000990

«ԷԿՈՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ
Ք.Վանաձոր Աղայան 94/31
Բանկը՝ ՎՏԲ-Հայաստան բանկ
Վանաձոր մասնաճյուղ
Հ/Հ 16036028818900
ՀՎՀՀ 06929779

Աշխատակազմի ղեկավար՝

/ստորագրություն/



Կ.Տ

«ԷԿՈՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի տնօրեն

/ստորագրություն/

Կ.Տ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« _____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « _____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « _____ » « _____ » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	կատարված աշխատանքների				Վճարման նյութակազմարր /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	վատացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

 Ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
 _____-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
(Կատարողի անունը)
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____ -- -ին հանձնման-
 ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ազգանուն, անուն

 ստորագրություն

 Ստորագրություն